«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

1 հունիսի 2021թ. N 36-Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.6.2 կետերը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո։

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. հունիսի 1-ի N 36-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Բովանդակություն

Հոդված1. Ընդհանուր դրույթներ 4
Հոդված 2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նպատակները 4
Հոդված 3. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի գործառույթները 5
Հոդված 4. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կազմավորման կարգը 5
Հոդված 5. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերը 7
Հոդված 6. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները 7
Հոդված 7. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները 8
Հոդված 8. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը 9
Հոդված 9. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը 9

Հոդված1. Ընդհանուր դրույթներ

1.1.Սույն կանոնադրությունը մշակվել է ի կատարումն«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝Պալատ) կանոնադրության 14.16.26 և 18.6.2 կետերի պահանջների:

1.2.Սույն կանոնադրությամբ սահմանվում են Պալատի հաշվապահականհաշվառման հանձնաժողովի (այսուհետ՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողով) կարգավիճակը, նպատակներն ու խնդիրները, ինչպես նաև ձևավորման ու գործունեության կարգը:

1.3.Հաշվապահականհաշվառման հանձնաժողովը Պալատի մշտական գործող մասնագիտականմարմին է:

1.4.Հաշվապահականհաշվառման հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին», «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքներով, Պալատի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և Պալատի համապատասխան այլ ներքին իրավական ակտերով:

1.5.Հաշվապահականհաշվառման հանձնաժողովի լրիվ անվանումն է՝ «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հաշվապահականհաշվառման հանձնաժողով», կրճատ անվանումը՝ «ՀԱՊ հաշվապահականհաշվառման հանձնաժողով»:

1.6.Հաշվապահականհաշվառման հանձնաժողովը հաշվետու է Պալատի խորհրդին: Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը կարող է ունենալ իր անվանմամբ հայերենով, ռուսերենով և անգլերենով ձևաթղթեր և/կամ անհատականացման այլ միջոցներ:

1.7.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքով:

Հոդված 2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նպատակները

2.1.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նպատակներն են.

2.1.1. Հաշվապահական հաշվառման մասնագիտական զարգացմաննօժանդակելը.

2.1.2. Հաշվապահական հաշվառման ոլորտում մասնագիտական զարգացումների վերաբերյալիրազեկման կազմակերպումը.

2.1.3. Հաշվապահական հաշվառման էական հարցերի շուրջ մասնագիտական քննարկումների կազմակերպումը:

Հոդված 3. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի գործառույթները

3.1.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները.

3.1.1. Աջակցում է ամբողջական ՖՀՄՍ-ների, հայեցակարգային հիմունքների, ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ի, ինչպես նաև դրանցում տեղի ունեցած փոփոխությունների և լրացումների թարգմանությանը,

3.1.2. Աջակցում է հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող իրավական ակտերի նախագծերի մշակմանը,

3.1.3. Կազմակերպում է մասնագիտական աշխատաժողովներ, կոնֆերանսներ, սեմինարներ, պանելային քննարկումներ, կլոր-սեղաններ հաշվապահական հաշվառման հարցերի շուրջ.

3.1.4. Կազմակերպում է հաշվապահական հաշվառման ոլորտում մասնագիտական զարգացումների վերաբերյալ իրազեկումը.

3.1.5. Նախաձեռնում է հաշվապահական հաշվառման ոլորտին վերաբերող շարունակական մասնագիտական զարգացման դասընթացներ.

3.1.6. Նպաստում է առցանց (online) միասնական մասնագիտական հարթակների ձևավորմանը.

3.1.7. Նպաստում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական այցերի կազմակերպմանը և վերապատրաստող մասնագետների համար վերապատրաստումների (ToT) անցկացմանը.

3.1.8. Օժանդակում է Պալատի հատուկ և մասնագիտական մյուս հանձնաժողովների և Պալատի աշխատակազմի կողմից Պալատի անդամների հետ փոխադարձ կապի ամրապնդմանն ուղղված միջոցառումների մշակմանը և իրականացմանը.

3.1.9. Գործնական կապեր է հաստատում և համագործակցում արտերկրի համանման կառույցների համապատասխան հանձնաժողովների կամ այլ մարմինների հետ.

3.1.10. Իրականացնում է Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված համապատասխան այլ գործառույթներ։

Հոդված 4. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովիկազմավորման կարգը

4. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ կարող են լինել միայն Պալատի անդամ աուդիտորները և փորձագետ հաշվապահները։

4.1.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը բաղկացած է 7 անդամից։

4.1.1. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը ձևավորվում է Պալատի խորհրդի յուրաքանչյուր ընտրման պահից եռամսյա ժամկետում: Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախորդ կազմի լիազորությունները շարունակում են գործել մինչև Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նոր կազմի ձևավորման պահը: (***փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 19-Լ***)

4.2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամները, այդ թվում՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահը, նշանակվում են Պալատի խորհրդի կողմից: (***փոփոխված 30.06.2025թ. խորհրդի որոշում 19-Լ)***

4.3. Պալատի խորհրդի կողմից նախապես նշանակվում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահը:

4.4. Պալատի աշխատակազմը և/կամ Պալատի նախագահն էլեկտրոնային փոստի և/կամՊալատի պաշտոնական կայքի և/կամ առցանց (online) մասնագիտական հարթակների միջոցով հայտարարություն են տարածում Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամների թեկնածուների ներգրավման վերաբերյալ:

4.5. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամ կարող է ընտրվել հաշվապահական հաշվառման և/կամ աուդիտորական գործունեության հետ կապված առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ ունեցող անձը:

4.6. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահն ուսումնասիրում է Պալատի աշխատակազմի և/կամ Պալատի նախագահի կողմից իրեն ներկայացված Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կազմում ներգրավվելու հետաքրքրություն ունեցող թեկնածուների ցանկը և ընտրում անհրաժեշտ թվով անդամների: Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի ներկայացմամբ Պալատի խորհուրդը նշանակում է անհրաժեշտ թվով Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամներին: Խորհուրդը, Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամներ ընտրելիս, հաշվի է առնում թեկնածուների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքները:

4.7. Այն դեպքում, երբ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի որևէ անդամի պաշտոնավարումը վաղաժամկետ (մինչև 4 տարվա ժամկետի լրանալը) դադարում է, ապա սույն կանոնադրությամբ սահմանված կարգով նշանակվում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նոր անդամ՝ նախորդ (պաշտոնավարումը դադարած) անդամի համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

Հոդված 5. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերը

5.1. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի գումարման միջոցով:

5.2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերը գումարվում են Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի կողմից՝ առնվազն յուրաքանչյուր երեք ամիսը մեկ անգամ կամ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամների կեսից ավելիի նախաձեռնությամբ: Նիստերը կարող են գումարվել թե՛ առցանց, թե՛ տեղում, թե՛ հիբրիդային ձևով՝ առցանց/տեղում՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի առաջարկությամբ:

5.3. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերն արձանագրվում են:

5.4. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովում քվորումն առկա է, եթե նիստին ներկա են անդամների կեսից ավելին:

5.5. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը որոշումներն ընդունում է նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

Հոդված 6. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամների իրավունքներն ու պարտականությունները

6.1. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամներն իրավունք ունեն.

6.1.1. մասնակցել Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերում ընդունվող որոշումների քվեարկությանը.

6.1.2. ներկայացնել հարցեր Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերում քննարկելու համար.

6.1.3. արտահայտել տեսակետ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ.

6.1.4. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի վերաբերյալ ստանալ տեղեկատվություն Պալատի այլ մարմիններից և աշխատակիցներից:

6.2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամները պարտավոր են.

6.2.1. մասնակցել Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերին:Եթե Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամը որևէ պատճառով չի կարող ներկա գտնվել նիստին, պետք է այդ մասին նախապես տեղեկացնի Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահին.

6.2.2. սահմանված ժամկետներում իրականացնել իրեն հանձնարարված աշխատանքները:

6.3. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամներն իրավասու չեն իրենց լիազորությունները փոխանցել այլ անձանց:

6.4. Եթե Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամն անհարգելի պատճառներով բացակայում է անընդմեջ երեքից ավելի նիստերից կամ մեկ տարվա ընթացքում անցկացված նիստերի ընդհանուր թվի կեսից ավելիից, ապա Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ կարող է որոշում ընդունել դիմելու Պալատի խորհրդին՝ տվյալ անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու և նոր անդամ նշանակելու հարցով:

Հոդված 7. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահի իրավունքներն ու պարտականությունները

7.1. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի գործունեությունը կազմակերպումէ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահը:

7.2. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նախագահը.

7.2.1. կազմակերպում և ղեկավարում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի ընթացիկ աշխատանքը.

7.2.2. ապահովում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի առջև դրված խնդիրների պատշաճ և ժամանակին կատարումը.

7.2.3. բաշխում է պարտականությունները Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի անդամների միջև և նրանց տալիս է հանձնարարականներ.

7.2.4. որոշում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստի օրակարգը, անցկացման ձևը, ամսաթիվը, ժամանակը և վայրը.

7.2.5. հրավիրում և անցկացնում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նիստերը և նախագահում է դրանք.

7.2.6. ապահովում է նիստերի արձանագրությունների վարումը և պահպանումը.

7.2.7. Պալատի խորհրդին զեկուցում է Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի տարեկան ծրագրի և տարեկան գործունեության մասին հաշվետվության վերաբերյալ.

7.2.8. որոշումներ է կայացնում փորձագետ ներգրավելու վերաբերյալ՝ ըստ անհրաժեշտության:

Հոդված 8. Հաշվապահական հաշվառմանհանձնաժողովի ծրագիրը և հաշվետվողականությունը

8.1.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը կազմում է իր գործունեության տարեկան ծրագիրը, որը ներկայացնում է Պալատի խորհրդի հաստատմանը՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան նախորդող նոյեմբերի 15-ը, իսկ նոր կազմավորված հանձնաժողովը՝ կազմավորումից հետո երկամսյա ժամկետում:

8.2.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 31-ը Պալատի խորհրդին է ներկայացնում նախորդ տարվա իր գործունեության մասին հաշվետվությունը:

8.3.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է Պալատի խորհուրդը:

Հոդված 9. Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նյութատեխնիկական և ֆինանսական ապահովումը

9.1.Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի նյութատեխնիկական ապահովումը ննրանանհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը կատարվում է Պալատի խորհրդի որոշմամբ՝ Հաշվապահական հաշվառման հանձնաժողովի կողմից կազմված և Պալատի խորհրդի կողմից հաստատված աշխատանքային ծրագրի և դրա իրականացման նպատակով նախատեսված նախահաշիվների համաձայն: